



# ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ե Կ

## ՈՒՍՄԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐ

ԳՈԼՈՒՑԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՐԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ի ԳԱՀԻՐԵ



1907

ԳԱՀԻՐԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ՀԱԼՔԱԼԵԱՆ

Շարլ Արտ-Էլ-Աղիլ Արտին Գարագոլին մօտ



ԱՆՊ

-ԳԱԶԻՐԵ-

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ե Ի

## ՈՒՍՄԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐ

ԳՈԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ի ԳԱՀԻՐԵ



1907

ԳԱՀԻՐԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ՀԱԼԵՊԼԵԱՆ  
Շարը Ապտ-Էլ-Ազիզ Ապտին Դարագօլին մօտ

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԴԱԼՈՒՍՏԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Գ. Ա. Հ Ե Ր Ե Ւ

Ա. ՀՐԳԱԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ,

Յօդաւած 1.— Քաղաքական ժողովին ընտրեալ Հոգաբարձութիւն մը կը փարէ Գաղուատեան վարժարանն՝ ազգային օրինաց արանգաւթեան համեմատ :

Յօդ. 2.— Հոգաբարձութիւնն օ կամ 7 անդամներէ կը բաղկանայ՝ վարժարանի լեզուէ հասկցող անհճառաւորութիւններէ ընտրեալ, անենալով Ատենապետէ, Ատենադպիրէ և Գանձապետէ կազմուած դիւան մը :

Յօդ. 3.— Հոգաբարձութեան գործունէութեան աեւազաւթիւնը երկու ասպի է : Հոգաբարձութիւնը կրնաց ամբողջութեամբ կամ մասնաբար վերընարուիլ :

Յօդ. 4.— Վարժարանն ունի իր հաստատուն կալուոծներն, որոց արգեանց  $0/0$   $10\varrho$  Առաջնորդարանի կը թողուի,  $0/0$   $10\varrho$  իրը պահեասի գումար վար կը դրուի, և մնացեալին մէկ մասը կամ ամբողջութիւնը, ըստ պիտացից և որոշման Քազ. ժողովից, Դպրոցի ծախուց կը յասկացուի : Ամեն ամսատվերջնն այդ գումարին  $1/12\varrho$  Առաջնորդարանի մը չոցուած Դրամատունէն գանձուելով Հոգաբարձութեան Գանձապետին կը զրկուի, որ Տնօրինութեան միջոցաւ կը բաշխէ զայն ուսուցչաց և կը հոգաց Դպրոցական այլ պէտքերն :

Յօդ. 5.— Եթէ Հոգաբարձութիւնը բայցառիկ ծախուց պէտք գուց, ինչպէս՝ նորագութիւն վարժարանի, գնում կարաւաց և պարուական պիտացից ելն, առ այդ կը զրէ Քազ. ժողովին, և անսր կազմանէ պահեասի գումարէն սահմանեալ չգումարով կը հոգաց այդ պէտքերը :

Յօդ. 6. — Եթէ Հոգաբարձութեան անդամնց միջաւմաննաւթիւնը հրաժարի , Քաղ. Ժողովը զայն լուծեալ համարեւ լով վերստին ընտրութիւն կը կատարէ , իսկ եթէ փոքրամանութիւնն հրաժարի պակսած անդամներուն անդէ Հոգաբարձութեան մնացած անդամներուն առաջարկած երկպատիկ ցանկէն պակսածներուն թուով ընկերներ կուտայ անոր :

Յօդ. 7. — Հոգաբարձութիւնը պարախ ամեն տարի յետ մըրցանակաբաշխութեան տեղեկագիր մը մասուցանել Քաղ. Ժաղովը՝ վարժարանի ընդհանուր ընթացքին վրայ , անոր յասաջիկոյ տարուան պիւտձէն ներկայացնել և եթէ ողբութեան մասին կարեւոր փափոխութեանց պէտքն զլայ , ծանուցանել զայնս և առնց վաւերացումը ինդրել :

Յօդ. 8. — Հոգաբարձութիւնը , եթէ պէտք զլայ , տիկիններէ և օրիսովներէ բավկացիալ երեք անդամնով ինսամակալութիւնն մը կընարէ իրեն իրեւ խորհրդակից և աջակից՝ աղջկանց ձեռարտեասի և ձեւազիսութեան զասերուն վրայ հակոզ : Սայն ինսամակալութիւնը իրաւունք ունի նաև աղջկանց վարժարանին համար կարեւոր զատուած կարգազրութիւններ առաջարկել Հոգաբարձութեան :

Յօդ. 9. — Աշակերտաւնեաց ձեռազործները ամեն տարի վիճակահանութեան կը զրախն Տիկնանց ինսամակալութեան կողմանէ , կամ , ամսնց բացակայութեան՝ Հոգաբարձութեան ձեռքով : Սայն վիճակահանութիւնն արդիւնքը մըցանակուաշխութեան ծախուց և ձեռազործի նիւթերու գնանն կը յատկացուի :

Յօդ. 10. — Հոգաբարձութիւնը երբեմն կ'այցելէ վարժարանը , զոնէ ամեն ամսոյ առաջնու Ռեքսաթ օրը , յորում աշակերտաց ամսեաց նօթերու մըջինները կը կարգացուին :

Յօդ. 11. — Եթէ Հոգաբարձութիւնը կամ անոր անդամներէն մըն կամ աւելին պարասպանց զանուին պաշտօնի կասարման մէջ , Քաղ. Ժողովը կընայ այդ պարասպանց մարմինը կամ անդամները հրաժարելունել .

Բ. ՏԵՂՐԻՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 12 — Վարժարանի մէջ Հոգաբարձութեան ներկացացիչն է Տնօրէնը , որ անկէ կ'անուանուի և պատասխանառու է անոր :

Յօդ. 13.— Տնօրէնը յանուն Հոգաբարձութեան և անոր հրահանգաց համաձայն կը կառավարէ վարժարանն և երկու ամիսը մի անգամ կը աեղեկազրէ Հոգաբարձութեան վարժարանի ընթացքին նկատմամբ , և անմիջապէս՝ կարեւոր պարագացից մէջ : Տնօրէնը կը հակէ վարժարանի կանոնադրութեան և ուսմանց ծրագրին անթերի գործադրութեան , ընդհանուր բարեկարդութեան , աշակերտանց առողջութեան պահպանման անհրաժեշտ զգուշացնեանց և պաշտօնէից պարասկեսութեանց անթերի կառավարման : Վարժարանի ելեւմափ տամարները կը բանէ , վարժարանի յառաջդիմութեան համար հարկ դատած միջոցները և պաշտօնեանիրը կ'առաջարիէ : Տնօրէնը Հոգաբարձութեան հրաւերով ներկայ կը գտնուի իր նիստերուն , ուր ձայն ունի , բայց ոչ քուէ :

Յօդ. 14.— Տնօրէնին իրաւասութեան ներքեւ է աշակերտանիրը վարձատրել կամ պատժել , պաշտօնէից հարկ եղած հրահանգները տալ , հակել անմանց պաշտօնավագութեան , վերջապէս , արտաքս կարգի սափազողական պարագացից մէջ աշակերտ մը և պաշտօնեալ մը առժամանակին կերպով հեռացնել վարժարանին և անմիջապէս Հոգաբարձութեան աեղեկազրել ի վիրջնական անօրինութիւն :

Յօդ. 15.— Տնօրէնը կիմայ , Հոգաբարձութեան հետ խորհրդակցութեամբ և որչմոտք , պաշտօնեաց մը ճամփել և կամ ընարել , ամսականը սրոշել կամ յաւելուլ , և իրենց պաշտօնի մէջ թերացող պաշտօնէից ամսականին համեմատական զեղչեր ընել :

Յօդ. 16.— Տնօրէնը պարասկեան է զատաւանգութեանց ժամանակացոյցը ու ներքին կանոնադրութիւնը պատրաստել , հակել վարժարանի մէջ բանուած օրագրութեանց և արձանագրութեանց կանոնաւորութեամբ վրայ , զատավրքերն որոշել , զատաւանգութեանց եղանակները բացարել : Տնօրէնը ամիսը մի անդամ ուսուցչական ժողով կը գումարէ զարոցական ո և է խնդրոց մասին խորհրդակցելու համար :

Յօդ. 17.— Տնօրէնը կը պատրաստէ քննութեանց ծրագիրն։ Պալոցական ամառիցին՝ կը սարքէ մրցանակաբաշխութեան հանդէսը, ու այդ առթիւ կը ներկայացնէ իր տարեկան տեղեկապրեն։

Յօդ. 18.— Տնօրէնը կրնայ յարաքերութեան մանել աչակերտաց ծնողաց հետ՝ ի մասին անոնց բացակայութեանց, վարուց կամ ուսմոնց վերաբերեալ խնդիրներու։

Յօդ. 19.— Տնօրէնը պատասխանատու է վարժարանի զոյից և գրեսանց պահպանման։

Յօդ. 20.— Տնօրէնը, որպէս զի կարողանայ լաւ վարել վարժարանը՝ օրական առ առաւելն երկու ժամ զաս ունենալու է։

Յօդ. 21.— Տնօրէնը պարտի վարժարան գանուիլ առաւօտեան ժամը 8էն մինչեւ կէս օր, և յետ միջօրէի 2էն մինչեւ արձակուրդ։

Յօդ. 22.— Տնօրէնը իր արամագրութեան ներքեւ ունենալու է զրագիր մը, տեարակները և գրութիւնները պատրաստելու համար Նախապատմիւ է որ այդ պաշտօնը արտի վարժարանի ուսուցիչներէն մէկուն, անչուշտ առ այդ ամսականի յաւելուածական վճարմամբ։

Դ. ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

Յօդ. 23.— Վարժարանի պաշտօնեայք են՝ Տնօրէն, հակոբ, Մանկապարտէզի գասափարակք, ուսուցիչք, բժիշկ և տնտեսք։ Առնց առաջին երեքը և անտեսք պարտին մնացուն ըլլալ, ուսուցիչք կրնան մնապուն կամ այցելու ըլլալ, խակ բժիշկը միշտ այցելու։

Յօդ. 24.— Մանկապարտէզի գասափարակք, աղջկանց վարժարանի հակոբք, և այս երկուքին սնստեսք խպական սեռէ ըլլալու։ Են։ Աղջկանց վարժարանի ուսուցիչք նախապատմիւ է որ իգական սեռէ ըլլան։ Մանչերու վարժարանի բոլոր պաշտօնեայք այդ են։

Յօդ. 25.— Վարժարանի բոլոր պաշտօնեայք պարտին իրենց ստանձնած պաշտօնը անթերի և խղճի մաօք կատարել ըստ արա-

մաղթութեան ներքին կանոնագրութեան և Տնօրինութեան հրահանգաց :

Յօդ. 26.— Պաշտօնեացք (ի բայց առեւզ անտեսները) պարախն ամեն օր ներկայութեան ակտարին մէջ ստորագրել և իրենց վարժարան մտից և եղից ժամերը նշանակել :

Յօդ. 27.— Հսկողք պարտին իրենց աշակերտներէ առաջ վարժարան գտնուիլ և աշակերտներէն վերջը մեկնիլ . հսկել իրենց սրահից բարեկարգութեան , աշակերտաց աշխատութեան , վարաց , բարոյ ականի , քաղաքավարութեան , մաքրութեան , հրակել նաև աշակերտաց վրայ ճայի , զրոսանքի և մարմնամարզի ժամանակ , ինչպէս նաև կիւրակէ և տօնի օրերն՝ Եկեղեցւոյ մէջ , և ինսանօք պատրաստել աշակերտաց բացակացութեանց ու վարուց օրագրութեան տետրակները , յանցուորհները պատաժել ըստ ներքին կանոնագրի արտահղբութեան , անհաքուր աշակերտները տուն դարձնել :

Յօդ. 28.— Ռւսուցիչք պարտին իրենց դասելու ժամանակուցոյցին մէջ նշանակուած ժամէն գոնէ 5 վայրկեան առաջ վարժարան գտնափիլ , իրենց ստանձնած դասերը՝ պարմանեալ ժամանակաց մէջ , ըստ որաշեալ մէթափի , ըստ ծրագրի և ըստ Տնօրինութեան հրահանգաց դասախոսել :

Յօդ. 29.— Լեզուի ուսուցիչները իրենց ստանձնած լեզուով պարտին խօսիլ աշակերտներու հետ :

Յօդ. 30.— Ամէն ուսուցիչ պարտաւոր է օրագրութիւն մը բանել , որուն մէջ կը նշանակէ խրաքանչիւր աշակերտի պատասխանած և պատրաստած պարտաւորութեանց արմէրը 0—10 նիւերակ և կ'արձանապրէ իր աւանդուծ դասերը :

Յօդ. 31.— Եկեղեցական երգեցողութեան ուսուցիչք պարախն շապիկ հազնիլ եկեղեցւոյ մէջ , կիւրակէ և տօնի օրերը :

Յօդ. 32.— Հսկողք եկեղեցական երգեցողութեան ուսուցիչք ըլլալու չէն :

Յօդ. 33.— Նախապատախ է որ աղջկանց հսկողք ըլլան միանդամայն ձեռագործի և ձեռագիտութեան ուսուցիչ :

Յօդ. 34.— Կրօնի կասը նախապատախ է որ յ մնձնափի եկեղեցականի մը , իսկ աստվածալահաթեան կասը՝ բժշկի մը ո՞ւ վարժարանի պաշտօնական բժիշկը պարտի ըլլալ :

Յօդ. 35.— Վարժարանի բժիշկը կը հակէ աշակերտաց առազգութեան, և ի հարկին անսնց առանձնական խրատներ կուտայ:

Ո և է պաշտօնէի հիւանդութեան պարագային, Տնօրինութեան հրաւերով կ'այցելէ ու կը քննէ զայն և տեղեկապիր մը կուտայ Տնօրինութեան: Վարժարանի բժիշկը նորընտիր պաշտօնեաներ և նորեկ աշակերտներն իրենց առողջութեան տեսակէտալ կը քննէ և արդինքն կը հաղորդէ Տնօրինութեան:

Յօդ. 36.— Սահման բանաւոր պատճառի բացակայութիւն կամ յապազում պարատպանցութիւն կը նկատուի: Բանաւոր պատճառաւոց համար՝ հորկէ Տնօրինութեան կանխաւ զրել և ի հարկին ապացույցանել: Հիւանդութեանց համար՝ միայն վարժարանի բժիշկին վկացութիւնը օրինական կը նկատուի:

Յօդ. 37.— Մտէպ ուշ մնացող և բացակայ գանուող պաշտօնեայք նախ ազգարարութիւն կընդունին Տնօրինութենէն, և թէ կրկնեն՝ իրենց ամսականէն կը զեղչուի, և եթէ զանցառութիւնք բարբառպատկին՝ պաշտօնէ կը դազրին: Հիւանդուս պաշտօնեայք, որ իրենց տկարութեան հետեանօք մտէպ կը բացակային, նմանապէս պաշտօնէ կը դազրեցուին: Բնդհանուր բարեկարգութեան դէմ մեզանչող պաշտօնեայ մը կարելի է սմամիչապէս հրաժարեցնել:

Յօդ. 38.— Երբ պաշտօնեայ մը կ'ենթարկուի հիւանդութեան մը, որուն երկարատեռութիւնը կը կոտկածուի, տեղը ուրիշ մը կը բերա՛ի առժամանապէս:

Յօդ. 39.— Պաշտօնեայք ոլորտին քաղաքավարութեամբ վաշրութեամբ աշակերտաց հետ, անվայել բառերով չսասաել, երբէք բաւան միջոցներ չ'զործածել, ի մի բան բարոյականի և բարեկըրթութեան կինդամնի օրինակ հանդիսանալ: Նոյն խակ վարժարանէն զուրս՝ իրենց վարքը պէտք չէ որ քննադատելի հանդամնէք ու նինայ:

Յօդ. 40.— Տնաեւող պարտի հայերէն խօսիլ և քաղաքավարութեամբ վարուիլ աշակերտաց հետ: Դազրոցի բացումէն մինչեւ արձակութ հան մնալ: Դազրոցի պահները, գտատրանները, զարանիները, սեղանատունները, և ճեմիշները մաքուր պահել: Ջրի կարամներն և գաւաթները սաէպ լոււալ: Նաև Դազրոցի գաները մըշտ փակ թագուէ, որպէս զի ո և է աշակերտ ար-

ձակուրզէն առաջ առանց հրամանի դուրս չելլէ . այցելուներու գալուստը ծանուցանել Տնօրինութեան :

Յօդ. 41.— Պաշտօնեայ մը որ իր պաշտօնին վերաբերեալ հարկի մը մասին դիագրամիւն կամ առաջարկ մը անի , պարափ առ այդ գրել Տնօրինութեան որ , եթէ բանաւոր գասէ , Հոգաբարձութեան հետ բանակցելով պէտք եղած պատասխանը կը հաղորդէ : Եթէ գանգաւաը Տնօրինութեան նկասանամբ է , կրնաց ուղղակի գրել Հոգաբարձութեան , գանգասապրին պատճէնը մը ենոյն ժամանակ Տնօրինութեան հաղորդելով :

Յօդ. 42.— Պաշտօնեից պաշտօնավարութիւնը ատքելան է : Ամեն պաշտօնեայ որ մրցանակարաշիտութենէն մինչ մի եօթնեալ յեաց յաջորդ ատքաւան հրաւեր չ'ընդունիր՝ հրաժարեալ կը նրա կասաւի : Այսպէս հրաժարեալ պաշտօնեայ մը արձակարգի երկու ամենաերան թոշակները կ'սասանայ : Հրաժարիլ ուզող պաշտօնեայ մը զպացական ամավերջէն մէկ ամիս առաջ պարափ Տնօրինութեան ծանուցանել , իր պաշտօնէ քաշուելու մասդրութիւնը . հակասակ պարապացին , չընդունիր արձակարգի երկու ամիսներան թոշակներն , ոչ առ բարուոք պաշտօնավարութեան վկայակիր :

Դ . ՊԱՅՄԱՆՔ ԲՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՃԱԿԵՐՏԱՅ

Յօդ. 43.— Վարժարանի մէջ կընդունուին Հոյազգի երկու աշակերտը հետեւեալ պայմաններավ :

Ա. — Մանկապարագէզի համար 4 էն 7 , Կախակրթաբանի համար 8 էն 15 , խալ լրացուցիչ զանցնթացքի համար՝ 13 էն 17 տարիեան պարափն ըլլալ , և առ այս տնհնալու են ծննդեան վըկարգիր : Այդ առդիքներն անհնալու են նոյն ատբային Յաշնաւոր 1 ին:

Բ. — Պարափն պատաւասաւած ըլլալ և առ այդ վկայակիր մը ունենալ :

Գ. — Պարափն գերծ ըլլալ տարափոխիլ և զգաելի հիւանդաղութիւններէ :

Դ. — Պարտին ուրիշ վարժարաննէ ծանր յանցանքի մը համար արաւաբառած չըլլալ :

Յօդ. 44.— Ամեն անոնք որ կը փափաքին վարժարանը աշակերտ տալ, պարտին զիմել Տնօրինութեան որ, եթէ վերացիշեալ պայմանաց արաւաբառաթեան համաձայն գանէ ներկայացուած աղուն վիճակը, կընդունի զան և նախնական քննութեան մը ենթարկելով անոր կարգը կ'որոշէ :

Յօդ. 45.— Վկացեալ աղքատաց համար վարժարանն ձրի է: Կարսղը պարտին վճարել՝ Մանկապարաէզի համար ամսական 20, Նախակրթարանի համար՝ 40, իսկ Լրացոցիչ դասընթացքի համար՝ 60 զրշ. Եզիպատական : Միջակ կարգութեան տէր անձանց զաւակները կիսաթոշակ կրնան ընդունուիլ :

Յօդ. 46.— Դաշնակի զառ առնել փափաքող աղջկունք պարտին վճարել ամսական 40 զրաշ Եզիպատական :

Յօդ. 47.— Ծնողը պարտին մասակարարել իրենց զաւակոց պատուի պիտոքները : Անկարող աշակերտը յիշեալ առարկաները վարժարաննէն կ'ըստանան ձրի :

Յօդ. 48.— Վարժարանի լրացոցիչ դասընթացքին մէջ այցելու աշակերտաներ ող կ'ընդունուին, ինչ ինչ մասնաւոր զասերու հետեւելու համար, և միայն իրենց հետեւած ճիւղերու զասախօսութեանց ներկայ զանուելով՝ կը վճարեն Հոգաբարձութեան որոշած ամսականն :

Յօդ. 49.— Վարժարանի բոլոր զասերը պարտաւորիչ են ի բաց տոհաղ աղջկունց գոշնուկի դասը :

Յօդ. 50.— Ծնողը պարտին իրենց զաւակաց վարժարանի էնրին կամ զայից պատճառած վնասները հասուցանել :

Ե · ՊԱՐՏԻՔ ԱՇԱԿԵՐՑԱՑ

— • —

Յօդ. 51.— Աշակերտը պարտական են զպրոցի բացման ժաման ներկայ զանուիլ և փակման պահէն առաջ չմեկնիլ ուսմանց բանաւոր պատճառած :

Յօդ. 52. — Աշակերտք առանց բանաւոր պատճառի և հիւ-  
անգութեան բացակաց զանուելու չեն վարժար մնէն : Բանա-  
ւոր պատճառաց և կարծառեաւ հիւանգութեանց համար ձեռ-  
զաց վիայտթիւնք , խակ երկարաաւ հիւանգութեանց համար  
բժշկին վիայտթիւնք կարծաւոր են : Հակասակ պարագային վա-  
րաց նիշէն կը զեղչափ , խակ սաէպ բացակացալ աշակերտք զբա-  
րոցէն կը մերժաի :

Յօդ. 53. — Աշակերտք պարտին հասպանիլ Տնօրինութեան,  
հակազաց , իրենց ուսուցչաց և վարժարանիս օրինաց :

Յօդ. 54. — Վարժարանիս աշակերտաց շինած և զործած  
զարգապիրք , ձեռազգործք և զծազրութիւնք վարժարանիս զորքն  
են , ու ոչ ոք իրաւունք ունի զանանք պահանջելու վարժարա-  
նէն : Հազարարձութիւնն իրեն՝ կը վիազանէ յարմար զատած  
ժամանակ այս մասին թուլառութիւն ընելու իրաւունքը :

Յօդ. 55. — Վարժարանիս աշակերտաց և աշակերտառեաց  
բացարձակապէս արգիլեալ է ու և է ծանրազին ասորկաց ըերել  
՚ի վարժարան :

Յօդ. 56. — Աշակերտք պարտին հոգասակիլ վարժարանիս  
ներքին կանանցրութեան արամազրութեանց :

---

Զ. ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆՔ , ՊԱՏԻԺՔ , ՆԻՇԱԳՐՈՒԹԻՒՆՔ ,  
ԲԵՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՄՐՑԱՆԱԿԱԲՈՃԽՈՒԹԻՒՆՔ

---

Յօդ. 57. — Աշակերտք կը վարձառորուխն լաւ նիշերով , հր-  
բարակակային զավասարվ , իրենց ծնողաց ուղղուած դրաւասազը-  
րով և մրցանակներով : Կը պատճառին՝ յափ նիշերով , յորդորով ,  
և ՚ի մասնաւորի սասառվ , հրապարակացին պարսուով և իրենց  
ծնողաց ուղղուած դժգանաթեան զրերով : Կան նաև՝ ուշ ար-  
ձակուելու , զքօսանքէ և հինգչաբթի օրուան պայտէն զրկուելու ,  
զեր օրինակելու և խնդիր լուծելու պատիմներ , սահմանեաց  
ներքին կանանցրութեամբ , և սամնք նախակրթանի մէջ  
միայն կը զործազրուին :

Յօդ. 58.— Դասախոսք ամեն գտափի իրենց աշակերտաց աշխատաթեանց եւ պատրախաններու համեմատ թիւեր կը նշանակեն օրագրութեան աեարակին մէջ , ինչպէս նաև հակողք՝ ամեն օր իրենց սրահին մէջ եղագ աշակերտաց վարուց համար : Նիշերը կը գանազանին 0էն մինչեւ 10 , բայ արժանեաց :

Յօդ. 59.— Այն բացակայութիւնները որք տեղի կռւնենան առանց ապացուցեալ հիւանդութեանց պատճառի եւ առանց Տընօրէնին արտօնութեան՝ ապօրէն կը նկատաւին : Այդ ահասկ բացակայութեանց համար՝ վարուց օրագրութեանց մէջ զէրօ կը նշանակուի :

Յօդ. 60.— Աւսուցիչք և հսկողք ամեն ամաց վիրջը, իրենց աշակերտաց նոյն ամաց մէջ սասացած նիշերու միջինները հաշտելով՝ Տնօրինութեան կը ներկայացնին : Տնօրէնը ամեն կարգի աշակերտաց զանուց և վարուց միջին նիշերը հաշուել կռւտաց իր գրագրին , ինչ որ աշակերտին նոյն ամաց մէջ ունեցած աշխատաթեանց և վարուց արժեքն ու չափը կը ներկայացնէ :

Մասնաւոր ցուցակներու վրայ ամեն կարգի աշակերտներ արտ ամսական աշխատաթեանց արժեքին համեմատ կը դասակարգուին . (ցուցակներ ուր նշանակուուծ են ամեն ճիւղի նիշերնեւս) :

Ամեն ամաց առաջին ուրբաթ օրը , այս ցուցակները կը՝ կորպացուին 'ի ներկայութեան Հոգաբարձութեան և Տնօրինութեան :

Տնօրէնը կը քաջալերէ աւ կը դրաւատէ աշխատասերները և կը յանդիմանէ ծոցլերը, գերազանց աշխատասերներու ծնողաց զոհանուկաթեան համակներ կը զրէ , իսկ ծայրացել ծոցլերու՝ զըժգոնութեան զրեր :

Այս ցացակներէն յաջորդ ամսաւն կը կախուին սրահին մէջ , եւ նոյն ամաց օրագրութեան աեարակիներաւն մէջ բայ այնք կը դասակարգուին աշակերտք :

Արտ ցացակներէն՝ իւրաքանչէր աշակերտի նիշերով ամսական վիճակացցներ կը պատրաստուին աւ կը դրկուին աշակերտաց ծնողաց :

Յօդ. 61.— Տարին երկու անգամ քննութիւնք կը կատարուին . մինչ նոյնեմերի վերջին եօթնելին , և երկրարգը՝ ասպիլի վիրջին եօթնելին , նախ զրաւոր եւ ազար բերանացի : Քննու-

թիւնք կը կասարաւմն ուսուցիչներու կողմանէ և Տնօրինին հսկողութեամբ :

Յօդ. 62.— Խւրաքանչիւր ճիւղի գրաւոր և բերանոցի քընութեանց միջինները այդ ճիւղի քննութեան արժեքը կը ներկայացնեն : Այս արժեքներուն միջինը՝ քննութեան միջինը կը ներկայացնէ , խակ երկու քննութեանց միջիններու միջինը , քննութեանց լնոգնանուր միջինը կուտայ :

Ամսական միջիններուն միջինը կը հաշուռի , որ ասքեկան աշխատաւթեան արժեքը կը ներկայացնէ : Վերացիչեալ եղանակութեան հաշուռաւած ասքեկան աշխատաւթեանց և քննութեանց լնոգնանուր միջիններուն միջինն ալ կը հաշուռի , որ աշակերտմն առքեկան շրջանին ընդհանուր միջինը կուտայ , և իր այս շրջանին արժեքն ու իր կորպին մէջ բանելիք աեզր կորոշէ , և ըստ այնքամ աշակերտը կը փորձարտուի :

Յօդ. 63.— Յետ խւրաքանչիւր քննութեան , Տնօրինութեան կողմանէ պիճակացացցեր կը կրկոյն ծնողաց , հանգերձ նիշերու ծանօթութեամբ և դիտողութեամբ :

Յօդ. 64.— Աշակերտի մը ասքեկան շրջանի լնոգնանուր միջինը կամէ 5 ըլլալու է Մանկապարակչի մէջ կորպ փոխելու համար . Նախակրթարանի համար՝ 6 կը սպահանջուի . խա՛լ լիսացոցի գտաբնթացքին համար՝ 7 :

Յօդ. 65.— Մրցանակարաշխութեան հանդէսը տեղի կունենայ Յուլիսի առաջին կիւրակէն , որ աշակերտաց ասքեկան աշխատաւթեանց ապա քննութեանց , և հունի ուրեմն շրջանի լնոգնանուր միջինը կը կորպացուի , որտեղ արժեքն համեմոտ կը վարձարտուին աշակերտը :

Յօդ. 66.— Մրցանակարաշխութեան հանդէսին , ամեն կորպէ երեք առաջին աշակերտներ մրցանակներ կրստանան : Վերացեալ աշխատասէրները և մամնուրոր ճիւղերու մէջ յառաջադէմները , որպէս և խիստ բարի վարք ունեցաները նույներ կը բարձարտուին :

Յօդ. 67.— Նախակրթարանի շրջանառարտք Նախական կրթութեան վկայագիր կ'առնեն : Խակ Լրացուցիչի շրջանառարտք պատշաճ վկայագիր մը , միշտ ստորագրուած Տնօրինին և Հոգտքարձութեան դիւնին կողմանէ :

Ե. ԱՅՅԵԼՈՒՔ

Յօդ. 68.— Այցելուք պարտին դիմել Տնօրինութեան որ եթէ յարմար գատէ, կ'առաջնորդէ և կը դիւրացնէ անոնց քըննութիւնը :

Յօդ. 69.— Այցելուք կրնան լրենց զխողութիւնները արձանագրել դիտողութեանց յատուկ մասնաւոր տետրակին մէջ :

Բ. ԱՐՁԱՆԱԳՐԻՒԹԵԱՆ ՏԵՏՐԱԿԻ

Յօդ. 70.— Վարժարաննը պարտի ունենալ հետեւեալ օրադրութիւններն ու առնադրներն ։

Ա.՝ Տոմար աշակերտութեան, ուր կ'արձանագրուին աշակերտաց մուտքը, ելքը, աարիքը և այլն :

Բ.՝ Տոմար՝ ուր կ'արձանագրուին դպրոցական դէպքերն և այցելութիւնը :

Գ.՝ Օրագրութիւն ուսմանց, ուր կ'արձանագրուին օր աւորուանդուած գասերու բովանդակութիւնն և աշակերտաց նիշերը :

Դ.՝ Օրագրութիւն՝ բացակայութեանց և վարուց :

Ե.՝ Տետր սաշտօնէից ներկայութեան :

Զ.՝ Տետր գոյից և գրեանց :

Է.՝ Տետր քննութեանց նիշերու և միջիններու :

Յօդ. 71. — Այս առմարներէն՝ ուսմանց և բացակայութեանց ու փարուց՝ օրագրութիւնները դասիարակ հակողաց քավը կը ման, իսկ միւսնները՝ Տնօրինութեան քով :

Թ . ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՌ

Յօդ. 72. — Վարժարանու ունի չորս գպրոցական հանդէս , Ա. — Մրցանակաբաշխութեան , որ ինչողէս ըստեցու՝ աեզի կունենաց Յուլիս 1 ի յաջորդաց կիսամիջն :

Բ. — Ի միջամակ վարժարանիս բարեկար - հիմնադիր Կարապետ Գալուստեանի և ի պատու վարժարանիս վերացնող Պօղոս վաշտ Նուպարի նուխտած հանդէս մը , որ կը կատարաի Յունակար 1 ին , (ըստ հին առաջի) :

Գ. — Ա. Թարգմանչաց օրը , Ա. Աշճարաց , Ա. Մեսրոպաց և ընկերաց յիշատակին ձօնեալ գպրոցական հանդէս մը :

Դ. — Վարդանանց կամ Ազգացին տօնի հանդէս , որ աեզի կունենաց Ա. Վարդանանց տօնի օրը , ակացին եկեղեցւոյ մէջ :

Եյս բալոր հանդէմները կը կատարաին պատշաճ ձասերով , արասասանութիւններով , և ազգացին երգերով , միշտ Առաջնորդին նախադարձութեամբ և եկեղեցական դաստին աշտկցութեամբ :

Ժ . ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 73. — Վարժարանու ունի Ներքին կանոնագիր մը որ կը ճշգէ մամրամանորէն աշակերաց և պաշաճնէից պարագանութիւններն , պատիժներն ու վարձատրութիւնները : Աշակերաց մասը կախաւած է վարժարանիս սրաներուն մէջ . իսկ պաշտօնէիցը՝ Տնօրինութեան սենեկներ :

ԺԱ. ՎԵՐԱԲԵՆՆՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ

Յօդ. 74. — Այս կանոնագիրը , որ 1906 սեպտեմբեր 1 էն կրուի գործադրական հինգ առարի վերջը միայն ամբողջառողէս կը վերաքննուի և կը բարեփոխանի , բայց Հայութարձութիւնը , ստիպողական պարագայից մէջ , կրնաց անոր մէկ քանի մասերը բարեփոխել , կամ յառելումներ ընել՝ կանխաւ Քաղաքական Ժողովը հայ անութիւնն ամնելէ եաբ :



# ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԱԼՈՒՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿԱՐԵՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Գ.Ա.Հ.Բ.Բ.

Ա. · ՊԱՇՏՈՆԵԱՅՑ

Յօդ. 1. — Պաշտօնեայց պարտին աշակերտաց հետ քուղաքավարութեամբ վարուիլ, զանոնք իրենց ծառայութեան ըլ զործածել, երբէք չծեծել : Հակառակ պարագային՝ Տնօրինութեանէ ազգարարութիւնն կը լուսաբանին, և եթէ շարունակեն այդ ընթացքն՝ իրենց ամսականէն կը զեղջուի, և մինչեւ խակ կը հրաժարեցուին :

Յօդ. 2. — Հսկողը պարտին աշակերտաներէ առաջ ներկայ դանուիլ ՚ի վարժարանի և աշակերտաներէ ետքը մեկնիլ. միշտ իրենց խնամոց յանձնուած աշակերտաց հետ ըլլալ, ոչ մտայն որսաներու մէջ այլ և ճաշի, զրուանափի, պատյաներու առեն և եկիզեցոյ մէջ :

Յօդ. 3. — Հսկողը պարտին նաեւ հսկել պատահարար բացակայ գանուող պաշտօնակցաց գասարաններուն վրաց :

Յօդ. 4. — Ուսուցիչք իրենց աւանդելի դասերը կանխառ պատարասած ըլլալու են :

Յօդ. 5. — Ուսուցիչք պարտին չծխել գտառքանի մէջ, գտառքանութեանդ մէջոցին :

Յօդ. 6. — Ուսուցիչք գտառքանութեանց ժամանակամիջոցն երբէք դասէ գտրո նիւթերու վրաց խօսելու չեն :

Յօդ. 7. — Ուսուցիչք պարտին աշակերտաներէ առաջ գտառքան գանուիլ և յետ աւարտամոն՝ աշակերտաներէ վերջ՝ գտրո ելլել :

Յօդ. 8. — Ուսուցիչք նախ նախորդ դասէն կը հարցաքընն աշակերտաց գոնէ մէկ քառորդն՝ իբր 25 վայրկեան անազութեամբ, և յետոյ կը գտառքանուն 25 վայրկեան :

Մամաւոր դամերու համար այդ բաժանումն կը փոխուի :

Յօդ. 9. — Ուսուցիչք ջանադիր ըլլալու են բոլո՞ր աշա-

կերտաց ուշագրաւթիւնն առանգեալ դասուց վրաց կեղրանացնել եւ ոչ թէ մի քանիներու :

Յօդ. 10. — Գասախօսք պարտին հանեւ հակել դասարանի բարեկարգութեան . զասարանի մէջ անհամազիսա աշակերաներու մասին զատէ վերջ հսկողաց կը աեղեկապրեն պատժելու համար , բայցատիկ պարագաներու մէջ միայն դասարանէ կ'արտաքրին զոհնո՞ք :

Յօդ. 11. — Ռւսուցիչք իրենց աշակերտաց դասի որութասաւթեանց , պատասխաններուն և զրի ու աետրակաց մաքրութեան համար նիշ կուանին . խակ անանց զասարանի մէջ ու նեցած վարուց թերութեան պատիմն հակազաց կը թաղուն :

Յօդ. 12. — Հսկողք՝ վարուց նիշերը գեղջելով և ոչ առնանեալ միջոցներով կը պատժեն իրենց աշակերտաց սրահից կոմ զասարանաց մէջ ունեցած վարուց թերութիւններն : Անուզգաներն և ծանր թերութեանց մէջ զանուազներն Տնօրինութեան կը ներկայացաւին պատժուելու համար :

Յօդ. 13. — Պաշտօնեալք իրենց պարասկանութեանց կոտարման միջոցին , անոնցմէ դաս ո՛ւ և է աշխատաւթեամբ զբաղելու չեն :

Բ. Ա. Ծ Ա. Կ Ե Ր Տ Ք

Յօդ. 1. — Վարժարանիս աշակերտք պարախն՝

Ա. — Վարժարանիս կանանց և անօրիննեալ կարգադրութեանց հլութեամբ հասպանովիլ :

Բ. — Ակնածանոք և յարդանօք վարժիլ դասատուաց և պատասխից հետ , թէ 'ի վարժարանի և թէ' այլուր , և սիրով ընկերոց հետ :

Գ. — Ամեն անգամ որ Տնօրէնն , հակոզ մը , կամ ռւսուցիչ մը իրենց խօսք ուզգէ , պարտին սորի վրաց մաֆիկ ընել :

Դ. — Ամեն առաւօտ ըստ Փամանակացայցի վարժարանն ներկաց զանուիլ անպրէս , և երեկոյեան ըստ այնմ մնելնի :

Ե. — Աշակերտք սրահաց մէջ կամ 'ի զասարանի , Տնօրէնի կամ այլուրի մը մասց առթիւ պարտին սորից վրայ ելլել , և հսկողի կամ ռւսուցչի հրամանու հստիլ :

Ե. — Թէ՛ սրահնել և թէ՛ դասարանի մէջ լսութիւն պահել և հանդարատարարոյ ըլլով :

Է. — Դասերու կամ սերազութեան առանց հրամանի ուրիշի հետ չխօսիլ, և գուրս չ'ելնել զասարանէն կամ սրահնէն :

Ը. — Ամեն կիւրակէ եւ աօն օրերն եկեղեցի երթալ, որուեալ աեւը զանուիլ ամենայն պարկեցաւ թեամբ եւ ակնածութեամբ. Զատկի ու Ծննդեան տօներաւն՝ հաղորդուիլ :

Թ. — Մոքուր հայերէն խօսիլ միշտ :

Ժ. — Վարժարանէն զուրս յսով վարուց տէր օսար ընկերոց հետ չ'առենալիլ :

Յօդ. 2. — Վարժարանի մէջ, բացի զասարքերէ եւ այլ զասական և արածնեալ զրքերէ՝ ուրիշ ո՛ եւ է զիրք կամ զբուածներ կարգադր արգիլեալ է, և եթէ պատահի զասախարակը կը զրաւէ զանանք, եւ կը պատճէ աշակերտն: Ներելի չէ նաև զրավանի եւ զրասեղունի մէջ պահել չ'արածնուած խաղալիքներ և այլ առարկաներ :

Յօդ. 3. — Աշակերտք պարտախն ձշգութեամբ եւ առանց տղմուկի հետեւիլ զանդակի ձայնին :

Յօդ. 4. — Աշակերտք մաքուր պահելու են իրենց զրքերն, աետքերն, զրասեղանն, զարակներն, իրենց շուրջն ու վարժարանի պատերն :

Յօդ. 5. — Աշակերտք զասարան մասած առենանին նոյն զասակի համար առնեն պէտք եղածը պարախն ի միասին ամնաւլ. զի մինչ ց'աւարտ զասափոսութեան արգիլեալ է զասարանէ զարտ ելլել. իմաս բացասիկ պարազաներաւն՝ ուսուցիչք կընան թուշւարել :

Յօդ. 6. — Անժամանակ կերպավ աշակերտաներէ ոչ ոք կընայ զուրս ելլել վարժարանէն առանց հոկողի մասնաւոր արտօնութեան :

Յօդ. 7. — Վըան զլուխը աղոստ, մազերը չը առնարուած, և եղանակները չ'կարտաւած աղոյ մը անմիջապէս տան կը զրկուի, որպէս զի մաքրուի եւ այնպէս զայ :

Յօդ. 8. — Աշակերտք իրենց չվերաբերող ո՛ եւ է առարկայ զպոցէ զուրս հանելու չեն :

Յօդ. 9. — Աշակերտաց միջեւ ո՛ եւ է առեւտուր արդիւութած է: Արդիւութած է նաև իրարու վախ սասակ տալ, և ո՛ եւ

Է նորամակաւ զրամ հուաքել առանց Տնօրէնի արտօնութեան :

Յօդ. 10. — Աշակերտաք իրենց ձեռքով վարժարանի գայից և կարասեաց հասուցած վնասաց համար կը պատժանին և պարագն գանձնք հասուցանել :

Յօդ. 11. — Զբանանքի խաղերն պէտք է կատարումն վայելու կերպով, առանց ծայրայեղութեան և միայն արտօնեալ խաղեր : Առաջին զանգակի ձայնով պէտք է խաղողէ դաղրիկ, երկրորդով կարգ կազմել, և երրորդով տուումնարան երթալ :

Յօդ. 12. — Ամեն աշակերտ ցերեկի ճաշն պարափ զպրոցին մէջ ընել :

Յօդ. 13. — Ճաշարանի մէջ պէտք է ճաշել վացելու կերպով և քաղաքավարութեամբ :

Յօդ. 14. — Աշակերտ մը իրաւոնք ունի դիմել իր որոշ հի հակովն՝ ընկերաց առ ինքն զործած անիրաւութեան մը համար, իսկ իմէ պաշտօնէլոց կազմէ դրկանք մը կրէ՝ կրնայ Տնօրէնին զիմել :

Յօդ. 15. — Առանց հիւանդութեան և արտօնութեան բացակայ գանուող աշակերտաց վարուց նայն աւուր նիշը 0 կը զրափի :

Յօդ. 16. — Վարժարանի կանոնաց համաձայն վարուող աշակերտաց համար սահմանեալ վարձարաւութիւններն են :

Ա. — Վարուց, բարուց, քաղաքավարութեան, մաքրութեան հնագանդութեան և ներկայութեան համար՝ հակովք իրենց օրագրութեան նիշերով կը քաջալերեն :

Բ. — Դասերու աշխատաւթեան և լու ովատրասաւութեան համար՝ զատախօսաց օրագրութեան նիշերով կը քաջալերեն :

Գ. — Ամեն ամսապիրջին նիշերու ընթերցման առեն Տնօրինութիւնն հրապարակաւ կը քաջալերէ լու թիւ սուցաններն և ամենէն ժրանջան աշխատաւորաց ծնողաց զահունակութեան նամակներ կը զրէ :

Դ. — Աշակերտաց՝ տարեշրջանին մէջ սասցած նիշերը, իրենց նայն առարւոց քննութեանց արժէ ընկերուն հետ կը միացուին, և ըստ այսմ մրցանակներ կը բաշխուին և կարգերու վտակաւութիւնք կը կատարուին :

Յօդ. 17. — Կանանազանց աշակերտաց համար սահմանեալ պատիժներն են :

Ա. — Յորդոր և յանդիմանութիւնն առանձնապէս :

Բ. — Ստորին նիշ պատկանեալ առմարին մէջ :

Գ. — Յանդիմանութիւնն աշակերտաց ներկայութեան :

Դ. — Զբօսանքէ զրկում :

Ե. — Մաթեմաթիքական խնդրոց լուծման, և կամ ընդօրինակութեանց պարտականութիւն :

Զ. — Ուշ արձակում :

Է. — Տնօրինութեան կողմանէ յանդիմանութիւն :

Ը. — Հոգաբարձութեան կողմանէ յանդիմանութիւն :

Թ. — Դժգոհութեան զիր առ ծնող :

Ժ. — Արտաքսում :

Յօդ. 18. — Այս պատմոց առաջին վեցն հակողք կուտան, իսկ միւս չորսն Տնօրինութեան կողմանէ կ'որոշուին :



# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

ԴԱԼՈՒՍՏԵԱՆ 0.99. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Գ. Ա. Հ. Ե. Բ.

Ա.

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ

ԾՐԱԳՐԻ ԵՒ ԴԱՍԵՐՈՒ ՎՐԱՅ



Ա. — Վարժարանի ուսումնական շրջանը կըսկսի Աւագանեմբեր 1 ին և կը վերջանաց յաջորդ ասարւոյ Յակիս 1 ին։ Վարժարանիս ունի երեք անջատ մասեր։

1. — Մանկապարագ մը, ուր կը յաճախին մանչ ու աղջկկ 4-7 տարեկան աղացը, երեք ասարւոյ բաժնուած, և կը մարզը՝ ին ֆրէպէլեան դրութեամբ։

2. — Նախակրթարագ մը, 8-15 տարեկան պատամեաց համոր, երկուսի բաժնուած, մին՝ մանչերու և միւսն՝ աղջկանց յասուել, և վեց տարուան շրջանափ, ուր աշակերտաք և աշակերտունիք կընդունին նախնական կրթութիւնն մը, և ուսկից ելնող աշակերտաք կընտն մանել կառավորական երկրորդական վարժարաններն։

3. — Եթէ Նախակրթարանի շրջանն աւարտող 13-15 տարեկան, գէթ տասնական տասնազներ կամ ուսանազունիներ վասագին Աղյուշին վարժարանի մէջ շարունակել իրենց ուսումն, անտնց համար պիտի սկսուի «Լրացուցիչ» գաւոնթացք մը, երկու տարուան շրջանափ, ուր պիտի սասնան երկրորդական ուսման մօտ կրթութիւնն մը, որ պիտի զիւրացնէ շրջանաւարտից՝ մանել տեղական և Եւրոպական բարձրագոյն վարժարաններն և համարաններն։

Բ. — Մանչոյ եւ աղջկանց տամանց ծրագին միւնայն է, ի

բաց առեալ մանչոց կամ աղջկանց յաստեկ մի քահի ճիւզերն ,  
որք նշանաւուած են վակողձիւ [թէջ] :

Դ. — Վարժարանիս դասերն պարասաւորիչ են :

Դ. — Վարժարանիս դասախոսութիւնը հայերէն կը լինին ,  
բացի լեզուաց դասերէն , որոց խրագանչիւրն իր լեզուաւ կ'ա-  
ւանդուի :

Ե. — Ետխակըթարանի վերջին երկու տարիներու և լրացու-  
ցիչ դասընթացքի զետութեանց դասերն և նախակըթարանի վեր-  
ջին առառոյ պատմաթեան դասն Փրանտերէն կամ անորիերէն  
լեզուով կրնան ոււանդուիլ : Այդ չորս դասարաններու ուսանողք  
իրարու հետ և իրենց հակոզաց հետ Փրանտերէն կամ անզիերէն  
միայն որբարին խօսիլ , դասերէ զորս սերտազաթեանց պա-  
հերուն :

Զ. — Տարւոյ 52 եօթնեկին 8ը՝ մեծ արձակուրզի , 2ը՝ քըն-  
նութեանց (խրագանչիւր քննութեան մէկ եօթնեակ) , 6ը՝ քննու-  
թեանց պատրաստութեան , (իրագանչիւր քննութեան երեք եօթ-  
նեակ) , 3 ը՝ տօնական զանազան արձակուրզներու (տաղաւարի ,  
բարեկենզանի , ամսանորի և ն. ) հաշուելով՝ կը մնայ 33 գործօն  
եօթնեակ : [\*]

[\*] Կիւրակէ օրերէ և տաղեկան մեծ պարապուրզէ դարս  
արձակուրզի օրերն են

Կրտպանդ .	1 օր
Ծնունդ .	3 »
Բարեկենզանի Հինգարիթի Ուրասթ և Շաբաթ	
և Մեծ Պահոց Երկուշարիթի օրերը .	4 »
Տեսան ընդ առաջ .	1 »
Աւագ շաբթուան վերջի Յ օրերը .	3 »
Զատկի Երասուշարիթի Երեքշարիթի օրերը .	2 »
Աւետումն Ս. Աստուածածնի .	1 »
Գիւտ նշխարաց Ս. Գրիգոր Լուսուորչի .	1 »
Տօն Ս. Թարգմանչաց և Սահակ-Մեսոսոպայ .	1 »
Վաղոպավասի , Վերապիտիման և Խաչվերացի	
Երկուշարիթի օրերը :	3 »

Որպէսզի ծրագրի իւրաքանչիւր շրջանի բուժանումներն յարգուին, և որոշեալ դասերն զպրոցական տամավերջին աւարտին՝ արմար զատուած է ուսմանց իւրաքանչիւր ճիւզը իր կարեւորութեան համեմատ բամնել 33, 66, 99, և 132 դասերու, որոց առաջինը կը ցրւինէ շարաթը մի անգամ զասաւամութիւն, երկրորդն՝ երկու անգամ, երրորդն՝ երեք անգամ եւն։ Այս բաժանումն աւելորդ է Մանկապարտէզի համար, ուր աղացը աւելի մարմնոց զարգացման յասուակ մարզանքներ ընդունելու են քան թէ միաք ծանրաբենելու։

Է. — Վարժարանս ասարին երկու քննութիւն ունի. մինչ նոյեմբերի և միւն ապրիլի վերջին եօթնեկին, իւրաքանչիւրն երեքտական եօթնեակ պատրաստութեամբ, ինչպէս ըստեցաւ։ Յաւլի 1 ին կըսկի տարեկոն մնծ պարապուրդն, և այդ ամսոց ուսաշին կիւրակին աելի կունենաց մրցանակաբաշխութիւնն Վարժարանի տարեշրջանոր կըսկի Աևատեմիւր 1 ին։

Ծ. — Դպրոցին կը բացաւի ամսան առաւօտեան ժամը 7 ին, ձմռոն՝ 7 ½ ին, սակայն գասախօսութիւնը կըսկին միշտ 8 ին։ Կէս օրին կըսկի ճաշի, զրոսանքի և հանգափի զագարն, որ վերջ կը զանէ 2 ին։ Յետ միջօրէի գասախօսութիւնը կըսկին ձմռոն 2 ին, առան 3 ին։ Վարժարանի գակումն տեղի կունենաց ձմռոն 4 ին, իսկ ամսան 5 ին։ Այս կիրավով օրական գասախօսութեան վեց պահ կաց միշտ, չարսն՝ առաւօտեան և երկուքն յետ միջօրէի։

Թ. — Հնագարմի օրերն, կէս օրէ վերջ աշակերտ խմբովին պատրաներ կընեն, քարտքի շրջակաց զրոսախցրերը, առաւելատէո իրենց հմուտթեան և մասցին զարգացման նպաստող փայրերու մէջ, ըստ հակովութեամբ իրենց գասախարակաց և առաւցաց միայն (փոխն ի փոխ)։

Մանկապարտէզն, Նախակրթարանն և Լրացուցիչ զասարանն առանձին ընկելու են այս պատրաներու։ Ամսաւան տաք եղանակին այդ պատրաներան աել արձակուրդ կը տրուի։

Ժ. — Դասի պահերն 50 վայրկեան են և 10 վայրկեան գազարներով ընդմիջեալ, որով դասերն միշտ կըսկին ժամապուխուրուն։

ԺԱ. — Մանկապարտէզի մէջ կ'աւանդուի օրական 3 դաս, երկուքն կէս օրէ առաջ, մին կէս օրէ եռքը։ Նախակրթարա-

Նվ 2 առաջին ասրիներուն մէջ կ'աւանդուի օրական չորս դաս + երկուքն կէս օրէ առաջ , երկուքն կէս օրէ վերջ : Խակ նախաւ կրթաբանի վերջին չորս տարիներուն և լրացուցիչ 2 տարիներուն մէջ կառանգուի օրական 5 դաս , երեքն կէս օրէ առաջ , երկու քըն կէս օրէ վերջ : Ուշազրութիւն պահանջող զասերն միշտ կէս օրէ առաջ կը դրուին : Ուսափ ՚ի նկատ առնելով հինգչարթի կէս օրերէ վերջի զասերուն զագարն , աշակերաք Մամնկա պարագիլ մէջ շարաթական 17 դաս միայն ունին , Նախակրթա րանի առաջին երկու ասրիներուն շաբաթական 22 դաս ; Խոկ ՚ախակրթաբանի վերջին չորս և լրացուցիչի երկու տարիներուն շաբաթական 28 ժամ դաս ունին :

Բ.

ՍԱՀՄԱՆՔ ՈՒՍՄԱՆՑ

1. — ԵՐԱԿԱԿԱՎՈՐ ՏԵՇԱՅՐ

- Վարժութիւն գրերու .  
—Թուարանական և երկրաչափական վարժութիւններ զլա նիկներով , գաւազաններով , և գնդիկներով (մինչեւ 100 թիւ) .  
—Առարկայտիօսական դասեր (Leçons Intuitives) :  
—Մարմամուրդական խաղեր :  
—Ֆրէսկէւան աշխատաթիւնք (Հիւսուածք , ոստայնունկուածք ծալլուածք , կարուածք , և կարուածք) :  
—Վարժութիւնք և շինութիւնք խորանարգով ; հաստուածա լուգմերով , զլանիկներով , կաւորներով և օղակներով :  
—Գասամութենէ զէմքեր և զէպքեր իրը վեպ :  
—Աշխարհազրութիւն , բնակուն ծանօթաթիւնք . Գահիրէ և շրջանացք :

2.— Ե Յ. Խ Ա. Կ Բ Թ Ա. Բ Ա. Ն

ԿՐՈՆՔ. — Քրիստոնէական վարդապետութիւն, հայ և օտար եկեղեցեաց գուաննական և ծխական տարրերութիւննք, Պատմութիւն Հայ եկեղեցւոյ, Բարոյագիտութիւն :

ՀԱՅ. ԼԵԶՈՒ. — Ընթերցում, արտասանութիւն, ուղղագրութիւն, քերականութիւն, վերլուծութիւն, շարադրութիւն աշխարհաբար, թարգմանութիւն (Աւետարան, Առաւածանչ, Եղիշէ) :

Ա.Ր.Ա.Բ.Ե.Ր.Հ. (Մանչոց). — Ընթերցում տպագրի և ձեռագրի, քերականութիւն, ուղղագրութիւն, թարգմանութիւն արաբերէնէ 'ի հայ, և հայերէնէ յարագերէն, շարադրութիւն, թարգմ. արաբերէնէ յանապիերէն :

ՅԻԱՆՍԵՐ.Հ. — Ընթերցում, բառադիտութիւն, քերականութիւն, ուղղագրութիւն, թարգմ. ֆրանսերէնէ 'ի հայ և հայերէնէ 'անգլիերէն, խօսակցութիւն, շարադրութիւն, նամակագրութիւն :

Ա.Ն.Գ.Լ.Խ.Ե.Ր.Հ. — Ընթերցում, բառադիտութիւն, քերականութիւն, ուղղագրութիւն, թարգմ. անգլիերէնէ 'ի հայ և հայերէնէ 'անգլիերէն, խօսակցութիւն, շարադրութիւն, նամակագրութիւն :

ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ. — Թիւ կարգալ և զրել, չորս գործորութիւնք, կոսորտակք, Եղիպատոսի հափեր և կշխներ, մեթքական գրութիւն, Կարսորութիւն և արմատ, երեց կանոն, ասկոս, զեղչ, ընկերութիւն, պարապմուզթ, արժեկթուզթ, խասնութիւն հաշիւներ, երկրաչափական դիտելիք, սոմարակալութիւն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Ս. Գրոց, Եղիպատոսի, Օամ. պետութեան, Պատմութիւն ազգային, Ընդհանուր պատմութեան զէմքեր և գուղքեր :

Ա.Ճ.Խ.Ա.Բ.Հ.Ա.Ռ.ՈՒԹԻՒՆ. — Բնական աշխարհագրութիւն, Եղիպատոս և Սուտան, Թուրքիա, Հին Հայուսաւան, Աշխարհիս հինգմասերն : Տիեզերագիտական, բնապատմական, երկրաբանական և մէտաքսորաբանական ծանօթութիւննք :

ԻՐԱ.Գ.Ի.ՏՈՒԹԻՒՆ. — Բոյս եւ բուսային արտադրութիւննք, կենդանիք և կենդանային արտադրութիւննք, քար և հանք և սոցա արտադրութիւննք, բնութեան ոյմերն և տարրերն :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄ. — Մարզս և տառվճականութիւն :

ՏԵՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — Քաղաքական (մանչոց) . Առանձին (աղջկանց) :

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. — (Մանչոց) . Ծանօթութիւնք :

ԳՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ. — Հայերէն , Արաբերէն , Ֆրանսերէն :

ԳԾԱԳԻՑՈՒԹԻՒՆ. — Գծագիտութիւն , երկրաչափական և ճարապագետական ձեւեր , բոյսեր և կենդանիներ :

ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ. — Եւրոպական և հայկական խողեր , եւրապական և եկեղեցական երգեցութիւն , ազգային երգեր , դաշնակ (աղջկանց համար , կամաւոր) :

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ :

ԶԵԽԱԳՈՒԹՅՈՒՆ — (Աղջկանց) :

3.— ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱԱՐՆԹԱՅՑՔ

ՀԱՅ. ԼԵԶՈՒ. — Գրադիտութիւն , տաղաչափութիւն , արտամանական և գրագիտական լուծում . շորտագրութիւն աշխարհաբար և փորձ գրաբարի , թարգմ. գրաբարէ աշխարհաբար , (եղիշէ , Եղիկ և Ժթրտ. գարու գրաբար) — Պատմ. հոյ մտանաց գրութեան , տանենարանական վարժութիւնք :

ԱՐԱԲԵՐԵՔ. — Շարագրութիւնք , պաշտօնական վրութիւնք , խօսակցութիւն :

ՑԲԱՆԱՍԵՐԷՆ. — Շարագրութիւն , պաշտօնական , առևարտկան գրութիւնք , ընթերցում հատընալիք հասաւածոց , խօսակցութիւն :

ԱՆԳԼԻԵՐԵՔ. — Շարագրութիւն , պաշտօնական և առևարտկան գրութիւնք , ընթերցում հատընալիք հասաւածոց , խօսակցութիւնք :

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. — Հայերանութիւն , Տրամադրանութիւն , Պատմականութիւն , Պատմականութիւն :

ՕՐԵՆՔ. — Օրէնագիտական ծանօթութիւնք :

ԳՐԱՎԱՐԺ. — Հայերէն , Ֆրանսերէն , Արաբերէն :

ԳԾԱԳԻՑ. — Գաշտանկար (սև գրիչով) :

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. Տ Ա. Բ Ի

ԿՐՈՆՔ (33) — Եկեղեցական Ընդհանուր պատմութիւն :  
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ (99) — Գրազիսութիւն , տրամաբանական լուծում , ընթերցում Ռակեբերանի ճառերուն և նոր գրաբար զրուածներու (ԺԹ. գար) , շարազրութիւն աշխարհաբար :

ՊԵՐՃԱԽՈՍՈՒԹԻՒՆ (33) — Ատենաբանական մարզանք , զըրաւոր և բերանացի :

ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ (66) — Գրահաշիւ (մինչեւ Բ. սատիճանի հաւասարութիւն) , Երկրաչափութիւն (Մակարդակ) :

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ (33) — Պարզ և կրկնակ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (33) — Պատմութիւն Հին և Միջին դարուց :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (33) — Վաճառականական :

ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ (33) — Մարդ և կենդանիք :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ (33) — Բնագիտութիւն :

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ (33) — Հոգեբանութիւն , Տրամաբանութիւն և Պատմութիւն իմաստասիրութեան :

ԱՐԱԲԵՐԵԿՆ (99) — Դրազիսաւթիւն , խօսակցութիւն , թարգմանութիւն անպիերէնէ յարաբերէն , շարադրութիւն :

ԱՆԳԼԻԵՐԵԿՆ (99) — Շարազրութիւնք , խօսակցութիւն , թարգմանութիւն արաբերէնէ յանպիերէն :

ՖՐԱՆՍԵՐԵԿՆ (99) — Շարազրութիւնք , խօսակցութիւն , թարգմանութիւն արաբերէնէ ֆրանսերէն :

ԳԻՐ (66) — Հայերէն , ֆրանսերէն , արաբերէն :

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ (33) — Բոյսեր և շէնքեր :

ԵՐԱԾԾՈՒԹԻՒՆ (33) — Ազգային և Եկեղեցական երգեր . Հայ եւ Եւրոպական ճայնազրութիւն , դաշնակ (աղջկանց , կամաւոր) :

ԶԵՐԱԳՐՈՒԾ (99) — Զեւու կար , Մանկանց և կանանց զգեստնեղններու առաջին վարժութիւնք :

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ (66) :

Բ. Տ. Պ Ի

ՄԱՅՐ. ԼԵԶՈՒ (99) — Գրագիտութիւն, (Գերձախօսութիւն, Բանաստեղծութիւն, Տաղաչափութիւն) . Բնիթերցում Եզնիկի և նոր գրաբարի (ԺԹ. գար), շարադրութիւն աշխարհաբար և փոքր պատրի, Պատմութիւն Հայ մատենալիութեան :

ՊԵՐՃԱԽՈՍՈՒԹԻՒՆ (33) — Ատենաբանական մարզանք :

ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ (66) — Գրահաշիւ (մինչեւ Մահիմա և Միումա) և նշանակը, Երկրաչափութիւն միջոցի, Հարթաչափութեան և Տեղագրութեան ծանօթութիւնք :

ՎԱՃԱՌՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ (33) — Ծանօթութիւն Վաճառամկանական օրինաց և գործողութեանց :

ՕՐԷՆՔ (33) — Ծանօթութիւն Օրէնսդիւառութեան վրայ, Աղպային Սահմանագրութիւն :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ (66) — Տիեզերագիտութիւն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (66) — Նոր գարեւու և Ժամանակակից պատմութիւն : Բազարակրթութեան պատմութիւն :

ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ (33) — Տարերք Բաւարկանութեան և Երկրաբանութեան :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ (33) — Տարերք Տարրաբանութեան :

ԱՐԱԲԵՐԵՔ (99) — Գրագիտութիւն, շարադրութիւն, թարգմանութիւն անդիբերէնէ յարաբերէն, խօսակցութիւնք :

ԱՆԳԼԵՐԵՔ (99) — Բնիթերցում ընակր հասու ածոց, շարուզութիւնք (նամակագրութիւն, նկարագրութիւն), թարգմանութիւն արաբերէնէ յանդիբերէն, խօսակցութիւն :

ՅԹԱՆՍԵՐԵՔ (99) — Բնիթերցում ընակր հասու ածոց, շարուզութիւնք (նամակագրութիւն, նկարագրութիւն), թարգմանութիւն արաբերէնէ ի ֆրանսերէն, խօսակցութիւն :

ԳԻՐ (66) — Հայերէն, արաբերէն, ֆրանսերէն :

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ (33) — Կինոանիներ և մարդոց գէմքեր :

ԵՐԱՖԵՏՈՒԹԻՒՆ (33) — Ազդագին և եկեղեցական երգեր, Հայկական և Եւրոպական խաղերավ ձայնագրութիւննք, դաշնուկ սովորանց (կամաւոր) :

ԶԵՄԱԳՐՈՒԾ (99) — Զեւ ու կար, քուսուժ և ժիւյ, գործական գործութիւնք :

ՄԱՐՄՆԱՄԱՐՁ (66) :

# ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿ

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍՈՒՑ

ՆԱԽԱԿԱՐԱԿԱՆ ՎԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ

Ն Ա Խ ԱԿ Ր Թ Ա Ր Ա Ն Լ Ր Ա Ց Ո Ւ Յ Ե Զ  
Տ Ա Ր Ի Տ Ա Ր Ի

	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	Ա.	Բ.
Մայրենի լեզու . . . . .	5	3	3	3	3	3	3	3
Արտասահմանաթիւն . և Ատենախօսութիւն	—	—	1	1	—	—	1	1
Աւազութիւն . . . . .	3	3	3	3	3	3	2	2
Իրազիտութիւն . և Գիտութիւն .	1	1	1	1	1	1	2	2
Պատմութիւն . . . . .	1	1	1	1	1	1	1	2
Աշխարհագր. և Տիեզերագիտութիւն	1	1	1	1	1	1	1	1
Կոժիք . . . . .	1	1	1	1	1	1	1	—
Տօնար. և Վաճառականական ծանր.	—	—	—	—	—	—	1	1
Օրէնսպիտական ծանօթութիւնք	—	—	—	—	—	—	—	1
Տեսանագիտ. և Խմասասափրութիւն	—	—	—	—	1	1	1	—
Արաբերէն (մանչոց)	2	2	3	3	3	3	3	3
Զեռապարծ (աղջկանց)	—	—	—	—	—	—	—	—
Անդիերէն . . . . .	—	2	3	3	3	3	3	3
Ֆրանսերէն . . . . .	—	—	3	3	3	3	3	3
Գիր . . . . .	2	2	2	2	2	2	1	1
Գծագիտութիւն . . . . .	1	1	1	1	1	1	1	1
Երաժշտութիւն . . . . .	2	2	2	2	2	2	2	2
Մարմասամարզ	2	2	2	2	2	2	2	2
Քովաքավարական և Կենցաղագիտական Հրահանդիւններ	1	1	1	1	1	—	—	—
	22	22	28	28	28	28	28	28

Ա.Ռ.ԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵԳԻՊՏՈՍԻ

Գահիրէ, 31 Հոկտեմբեր 1906

ԴԻՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԱԶԴԱՑԻՆ ԳԱԽԱՌԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Թիւ 2344

ՎԱՆԱՀԱՅՄԻ ԵՐՈՒԱԾԻ ՊԵՋ Աղարօն

ԴԻՐ-ԸՆԿԵՐԱՎԵԼՈՒ ՊԱՏ. ՀՈՂԱՔԱՐՃՈՒԹԵԱՆ  
Ազգային ԳԱԼՈՎԱՄԻԱՆ ՎԱՐԺԱՐԱԲԻ

Ընդ զրոյ Պատ. Հողաքարձութեանդ կը յղենի Ազ-  
գային Գաւառ. վարչութեան Պատ. Քաղաքական ժո-  
ղովոյ եւ բարեցան Հողաքարձութեանդ ներկայացու-  
ցիլերէն յատկապէս կազմուած Յանձնաժողովին բա-  
ղաքին Ազգային Պարուսեան վարժարանի համար պա-  
տրաստ նոր Կանոնագրերու եւ Ուսմանց յայտագրի վա-  
ւերացես օրինակները, որոնց բնագրերը ժամանակա-  
համար են պահպան կատարելու ժամանակաշրջանու 6/19 ի  
նիսին մէջ:

Առելորդ է ըսկէ թէ նորերու պատրաստութեամբ հիմ  
կանոնագրերն ու Յայտագրին դադրած են զործադրու-  
թենէ եւ Խառն ժողովը ապահով է թէ Պատ. Հողաքար-  
ձութիւնդ ամեն չանի ի զործ պիտի դնէ նորերուն հա-  
մար ուղղութիւն մը տալ Ազգային երկուու վարժարա-  
նին, որով առելի պիտի շեշտոյ անոր բարեկարգու-  
թիւնը եւ երկուու սահուց յառաջդիմութիւնը:

Այս առրիհ կար եւ յաջողութիւն մաղքելով բարե-  
ցան Հողաքարձութեանդ:

Աղջունի հայրական սրտագին սիրոյ եւ լիաշուրբն  
օրհնութեան:

ՄԱԿԱՄ ԱՂՈՐԱԿԱՐ

Ա.Ռ.ԶՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ  
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱԽՈՒՆԻ

Թիւ 2343

Այս կանոնագիրը և Ուսմանց Յայտագիրը քննուած և հաս-  
տառուած ըլլալով վիճակիս Պատկ. Խառն Ժողովոյ 6/19 Հոկ-  
տեմբերի 1906 Յ թ. Նիստին մէջ, կը հրամայինք անոնց դոր-  
ձագրութիւնը :

Գահիրէ, 18/31 Հոկտեմբեր 1906

Առաջնորդ Հայոց Եզիպտոսի  
ՄԿՐՏԻՉ Ռ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂԱՏԻՈՒՆԻ

